

ԳՏՀ.616.24-002.5

Տուրբերկույոզի տարածվածությամբ ուսումնասիրումը ԼՂՀ-ի պայմաններում 1988-2000թթ. Ա.Խ.Դադայան, Կ.Հ.Անդրյան

Աշխատանքի նպատակն է՝ ուսումնասիրել ԼՂՀ-ում տուրբերկույեզի տարածվածության դինամիկան 1988-2000թթ. ժամանակաշրջանում:

Տուրբերկույոզը մարդկությանը հայտնի է շատ վաղ ժամանակներից: Հին Եգիպտոսից մեր ժամանակներն են հասել մտմիաներ, որոնց մեջ լավ պահպանվել են տուրբերկույոզի ախտահարումից առաջացած ախտաբանական հետքեր: Հիպոկրատը մանրամասն նկարագրել է տուրբերկույոզի կիմիկան: Իր ժամանակին մեծ մտածող, բժիշկ, փիլիսոփա Իբն-Սինան (980-1037) նույնիսկ մանրամասն նկարագրել է տուրբերկույոզի կլինիկան: Տուրբերկույոզի խիստ վաղեմության մասին վկայում է 1904թ. գերմանական Հեյդելբերգ քաղաքի շրջակայքում հայտնաբերված մի պատանու կմախքը, որը մահացել է 6000 տարի առաջ և որի կրծքավանդակի ողների վրա նկատվել են տուրբերկույոզի բնորոշ ախտաբանական հետքեր: 1882 թ. մարտի 24-ին գերմանացի գիտնական միլյուկենսաբան Ռոբերտ Հոխը հայտնաբերում է տուրբերկույոզի հարուցիչը և ապացուցում դրա վարակիչ բնույթը: Տուրբերկույոզը խորոնիկ ընթացող սոցիալական վարակիչ հիվանդություն է: Հարուցիչն ախտահարում է բազմաթիվ օրգան-հյուսվածքներ, սակայն առավել հաճախ՝ բորբերն ու ավշային համգույցները: Տուրբերկույոզի վարակի աղբյուրը 90-95% հիվանդ մարդն է, 5-10% խոշոր եղջերավոր անասունները, հիվանդության հարուցիչը օրգանիզմ է անցնում օդակաթիլային ճանապարհով՝ վարակված օդը ներշնչելու միջոցով: Որոշ դեպքերում հարուցիչը օրգանիզմ է թափանցում սննդի միջոցով՝ հիվանդ կենդանիների կաթից, կաթնամթերքների, եգակի դեպքում վնասված մաշկի, ներարգանդային շրջանում ընկերքի միջոցով: Վարակի դեպքում միշտ չի առաջանում տուրբերկույոզ, քանի որ մակրոօրգանիզմը պատասխանում է բջջային և իունդրալ պաշտպանողական ռեակցիաներով, շատ դեպքերում կասեցնելով դրա հետագա զարգացումը: Վարակված, բայց չհիվանդացած անհատների օրգանիզմում հիվանդության հարուցիչները երկար տարիներ կարող են մնալ կենսունակ և միայն օրգանիզմի դիմադրողականության թուլացման դեպքում, որին նպաստում է հոգեվիճակը, ֆիզիկական տրավման, թերսնուցումը, գերհոգնածությունը, ծանր ընթացող հիվանդությունները և այլ գործոններ սկսում են ակտիվացնել տուրբերկույոզի հարուցիչները: Այսինքն ինֆեքցիայի զարգացման համար որոշակի նշանակություն ունի ընդհանուր վիճակը: Որքան բարձր է օրգանիզմի դիմադրողունակությունը, այնքան քիչ հավանականություն կա հիվանդության զարգացման համար:

Գլխավորված էր ինունմասիլությունները ցույց են տվել, որ տուրբերկույոզի շարժման վրա նկատելի ազդեցություն են բույլել տարերային աղետներն ու պատերազմները: Այդ տեսակետից ուշադրության արժանի են Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում մեր կատարած ուսումնասիրությունները տուրբերկույոզի շարժման մասին նախապատերազմական, պատերազմական և հետպատերազմական տարիներին: Ուսումնասիրությունների ընթացքում հիմք ենք դնումել համրապետական տուրբերկույոզային դինսպանսերի տվյալները և մեր սեփական հետազոտությունները: Առաջնահերթ ուսումնասիրել ենք հիվանդության դինամիկան՝ սկսած 1988 թ-ից մինչև 2000 թ., բացարձակ թվերով և 100000 բնակչի հաշվով ըստ տարիքների, որի

ԼՂՀ տուրբերկույոզի շարժը 1988-2000 թթ

Աղյուսակ 1.

Տարեթվերը	Ակտիվ տուրբերկույոզով առաջին անգամ հիվանդացել են		Դիսպանսերային հսկողության տակ հիվանդների թիվը		Ակտիվ մահացածները	
	բացարձակ ծակ թվերով	100000 բնակչի հաշվով	բացարձակ թվերով	100000 բնակչի հաշվով	բացարձակ ծակ թվերով	100000 բնակչի հաշվով
1988	34	20	164	96,4	3	1,7
1989	35	20,5	118	69,4	1	0,5
1990	33	22	122	81,3	3	2
1991	42	28	155	103,3	3	2
1992	13	9,2	141	100,7	3	2,1
1993	37	26,4	151	107,8	4	2,8
1994	50	38,4	189	145,3	--	--
1995	54	41,5	213	169,8	3	2,3
1996	49	37,6	215	165,3	6	4,6
1997	37	28,4	183	140,7	2	1,5
1998	65	50	199	153	4	3
1999	68	52,3	225	173	4	3
2000	51	39,2	218	167,6	--	--
Ընդամենը	578	400	2229	1657	36	26,5

Աղյուսակի տվյալները ցույց են տալիս, որ 1988-2000թթ. տուբերկուլոզի ակտիվ ձևով հիվանդների քանակը բացարձակ թվերով կազմել է 578, իսկ 100000 բնակչության հաշվով 400 հիվանդ: Նշված ժամանակահատվածում դիսպանսերային հսկողության տակ գտնվողների և բուժվողների քանակը բացարձակ թվով կազմել է 2229, 100000 բնակչության հաշվով 1657 մարդ: Ըստ աղյուսակի տվյալների հիվանդության առավել աճ է նկատվել սկսած 1994 թ.: Դա բացատրվում է մալարոլ տաքինների բնակչության տեղաշարժում հիվանդները հնարավորություն չեն ունեցել ներկայանալ բժշկության:

Ռուսմնասիրել ենք մաս տուբերկուլոզի ակտիվ ձևով հիվանդների դինամիկան ըստ շրջանների, որի տվյալները բերված են աղյուսակ 2-ում:

Աղյուսակի տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ տուբերկուլոզի կլինիկական ձևի աճ է նկատվել մինչև 40 տարեկանը, իսկ ավելի բարձր հասակում նկատվում է վարակվածության անկում: Ընդ որում՝ տղամարդկանց մոտ 2,5 անգամ ավելի է արտահայտված, քան կանանց մոտ: Վերջինս բացատրվում է կանանց օրգանիզմի ավելի բարձր դիմադրողականությամբ, իսկ տղամարդկանց մոտ ֆիզիկական ծանրաբեռնվածությամբ, չի բացառվում նաև ալկոհոլի և թմրանյութերի չարաշահումը: Առավել շատ հիվանդներ են գրանցված Ստեփանակերտում և Մարդակերտի շրջանում: Հարկ է նշել, որ նշված բոլոր շրջաններում սկսած 1999 թ. նկատվում է տուբերկուլոզի ակտիվ վարակվածության անկում:

Աղյուսակ 3-ից երևում է, որ հիվանդների մոտ հիմնականում արտահայտված է շնչառական ուղիների (թոքերի) տուբերկուլոզ: Հիվանդության հարուցիչները օրգանիզմ անցնելով 90-95% թոքերում առաջացնում են տուբերկուլոզի առաջնային կոմպլեքս, որին բնորոշ է թոքային հյուսվածքների մեռուկացումը:

Մեր կատարած ուսումնասիրությունների արդյունքները ցույց են տվել, որ հիվանդները հիմնականում սոցիալապես անապահով ընտանիքներից են: Կան ընտանիքներ, որոնց անդամները վարակված են և գտնվում են հսկողության տակ:

ԼՂՀ-ում տուբերկուլոզի աճը պայմանավորված է բնակչության սոցիալ-տնտեսական անբավարար վիճակով, որը շարունակվում է առ այսօր: Հետևաբար տուբերկուլոզի վարակը կանխելու համար պետք է հաստով ուշադրություն դարձնել բնակչության կենսական պայմանների բարելավման վրա:

Այսօրվա դրությամբ տուբերկուլոզը համարվում է համաշխարհային պրոբլեմներից մեկը: Համաշխարհային առողջապահության կազմակերպության 1993թ. տվյալների համաձայն աշխարհի բնակչության 1/3 վարակված է տուբերկուլոզով, որոնց գերակշիռ մասը մահանում է:

Օգտագործված գրականություն

1. К. Д. Ияткин – „Микробиология“, Москва, изд. „Медицина“ 1980г.
2. Г. Шлегель – „Общая микробиология“, изд. „Мир“ М. 1972 г.
3. Լ.Աֆրանգուլյան-«Բժշկական ֆիկտրիորդիա», «Լույս» հրատարակչություն, Երևան- 1979թ.

Распространенность туберкулеза в НКР.

А. Х. Далаян, К. Г. Андриян

Резюме

Исследованием установлено, что за период с 1988 по 2000гг. число вновь выявленных больных активным туберкулезом в абсолютных числах составило 578 человек. Под диспансерным наблюдением оказались 2229 больных в абсолютных числах и 1657 больных на 100000 населения. Рост заболеваемости установлен с 1994г. Наибольшее количество больных активной формой туберкулеза зарегистрировано в г. Степанакерте и в Мардакертском р-не. Более подверженным туберкулезу оказались в возрастной группе до 40 лет, выраженной формой – туберкулез легких и верхних дыхательных путей.

Տուբերկուլոզի տարածվածությունը ԼՂՀ-ում

Ա.Խ.Դադայան, Կ.Գ.Անդրյան

Անվանում

Ուսումնասիրությունների արդյունքները ցույց են տվել, որ 1988-2000թթ. տուբերկուլոզի ակտիվ ձևով հիվանդների քանակը բացարձակ կազմել է 578, իսկ 100000 բնակչության հաշվով 400 հիվանդ: Դիսպանսերային հսկողության տակ գտնվողների և բուժվողների քանակը բացարձակ թվերով կազմել է 2229, 100000 բնակչության հաշվով 1657 մարդ: Հիվանդության աճ նկատվել է սկսած 1994թ.:

Տուբերկուլոզի կլինիկական ձևի աճ է նկատվել մինչև 40 տարեկան:

Ակտիվ տուբերկուլյոզով հիվանդների քանակը ըստ շրջանների 1988 (1), 1999 (2), 2000(3) թթ:

Աղյուսակ 2

Տարիք	Ստեփա- նակերտ			Մարտունի			Հաղրուք			Ասկերան			Մարդակերտ			Շուշի			Ընդամենը		
	1	2	3	1	2	3	1	2	3	1	2	3	1	2	3	1	2	3	1	2	3
11-20	14	6	5	1	2	1	2	3	1	2	3	--	3	3	2	--	1	2	22	18	11
21-30	9	7	4	4	--	2	1	1	1	--	2	1	3	2	2	--	--	1	17	12	11
31-40	7	6	3	2	2	1	1	3	1	--	1	2	1	2	4	--	1	--	11	15	11
41-50	2	3	2	3	--	--	1	2	1	2	1	1	1	1	1	--	--	1	9	7	6
50 և բարձր	5	5	3	--	4	1	1	--	1	--	--	1	--	3	3	--	--	--	6	12	9
տղամարդ	26	21	15	8	5	4	3	7	1	3	4	4	6	9	11	--	2	4	38	41	35
կին	11	6	2	2	3	1	3	2	3	1	3	1	2	2	1	--	--	--	17	16	9

41

Նոր հայտնաբերված հիվանդների մոտ տուբերկուլյոզի կլինիկական ձևը՝ 1988 (1), 1999(2), 2000(3) թթ.:

Աղյուսակ 3

	Ստեփա- նակերտ			Մարտունու շրջան			Հաղրուքի շրջան			Ասկերանի շրջան			Մարդակերտի շրջան			Շուշիի շրջան			Ընդամենը		
	1	2	3	1	2	3	1	2	3	1	2	3	1	2	3	1	2	3	1	2	3
Նոր հայտնա բերված	37	27	17	10	8	5	6	9	4	4	7	5	8	11	12	--	2	4	66	62	43
Շնչառական ուղիներ(բոր.)	34	27	16	10	7	4	6	8	3	4	7	4	8	11	12	--	2	4	62	60	39
Այլ օրգաններ	3	--	1	--	1	1	--	1	1	--	--	1	1	--	--	--	--	--	4	2	4